ՏԵՂԵԿԱՆՔ

Գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ և ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»

Գ Լ Ո Ւ Խ 2.
ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 6. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը

1. Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական կառավարումը պետության կողմից վարվող քաղաքականության մշակումն ու իրականացումն է հետևյալ ուղղություններով՝

ա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը.

բ) էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.

գ) Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման պետական ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը.

դ) սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

ե) էներգախնայողության և էներգաարդյունավետության ստանդարտացման փաստաթղթերի մշակումը և ներդնումը.

զ) էներգատեղակայանքների համապատասխանության կամավոր հավաստման համակարգի ապահովումը.

է) էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղղությամբ գործող և կառուցվելիք օբյեկտների նախագծերի էներգետիկ փորձաքննությունների իրականացման համակարգի ստեղծումը.

ը) էներգետիկ փորձաքննության գործունեության բնագավառի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

թ) էներգակիրների հաշվառման և վիճակագրության ապահովումը.

ժ) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման նախագծերի և ծրագրերի ֆինանսավորմանն աջակցումը.

ժա) էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման նպատակով ուսուցման կազմակերպումը, գիտատեխնիկական առաջընթացին, տեղեկատվությանը և քարոզչությանն աջակցումը.

ժբ) էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

ժգ) հատուկ սակագնային քաղաքականության կիրառում արևային կայանների շինարարության համար, մասնավորապես՝ խախտված (աղտոտված, աղուտավորված, արդյունաբերական թափոնակույտերով, պոչամբարներով ծածկված) հողերի վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության 14 դեկտեմբերի 2017 թվականի N 1643-Ն որոշմամբ տրված խախտված հողերի դասակարգումների, լքված արդյունաբերական հարթակներում, ինչպես նաև ջրամբարների մակերևույթին և գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի կամ շրջանային միջին մակարդակը չգերազանցող կադաստրային գնահատմամբ գյուղատնտեսական ցածրորակ հողատեսքերի վրա (Հողերի պիտանիությունը գյուղատնտեսության կարիքների համար սահմանվում է հողային կադաստրի միջոցով):»: